

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՄԽԻԹԱՐԵԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
300-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԲԱՅՄԱՆ ԱՌԻԹՈՎ
(22 Նոյեմբերի 2000 թ.)**

*Յարգելի Նախագահ Ազգային Ակադեմիայի,
Սիրելի ներկաներ.*

Մեծ ուրախութիւն է Մեզ համար, որպէս Ամենայն Հայոց Հայրապետ, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայում ներկայ գտնուել վաստակաբեռն կեանքի 300-ամեայ իր յոբելեանը տօնող Մխիթարեան միաբանութեանը նուիրուած գիտաժողովի բացմանը: Համայն մեր ժողովրդի հետ Մեր հոգին բերկրանք է ապրում, որ այսօր անկախ մեր Հայրենիքի խաղաղ երկնքի ներքոյ Հայոց գիտութեան կաճառում հնչելու են մեծագործ Հայորդեաց նուիրական ու թանկ բազում անուններ, որոնց առջև երախտագէտ մեր ժողովուրդը գլուխ է խոնարհում եւ յիշելու է սերնդէ սերունդ:

Հաւատքի եւ նրանից բխած անմնացորդ նուիրումի վրայ է խարսխուած Հայոց հոգեւոր կեանքն ու մշակոյթը: Մեր տաճարների որմերին ու ձեռագիր Աւետարանների գեղահիւս խորաններին դրոշմուած են Հայ վարպետների ու ծաղկողների «Հաւատքով կանգնեցաւ» խօսքերը:

Արդարեւ, հաւատքով կանգուն է Մխիթարեան միաբանութիւնը: Իր մեծագործ հիմնադրի՝ Հայաստանեայց Առաքելական

Սուրբ Եկեղեցու վարդապետ Մխիթար Սեբաստացու հաւատն ու նուիրումը Ս. Ղազարում 300-ամեայ ստեղծարար կեանք դարձաւ՝ պսակելով հայ մշակոյթի աստղազարդ երկնակամարը պայծառաշուք համաստեղութեամբ:

Պատմական յիշատակներով ու հրաշագործ զօրութեամբ հանրայայտ Սեբաստիոյ Սուրբ Նշան վանքից էր Մխիթար վարդապետը: Սեբաստիայի Հողդար թաղամասում ծնուած պատանին դեռեւս 9 տարեկանում դպիր ձեռնադրուելով, 15 տարեկանում վանք է մտնում, ուր ձեռնադրութեամբ վերանուանւում Մխիթար: Նրա կեանքում բախտորոշ եղաւ հանդիպումը Ս. Էջմիածնի Միքայէլ արքեպիսկոպոսի հետ, որը հռչակուած էր իր իմացութեամբ ու ճգնակեցութեամբ: Ուսուցիչ եւ աշակերտ, վանքից վանք անցնելով, հասնում են Սեւանի մենաստան:

Մխիթարի երազանքն էր հայոց վանքերի օրինակով նոր միաբանութիւն ստեղծել, սակայն դժնդակ ժամանակները անհնարին էին դարձնում նրա ծրագրի իրականացումը Հայաստանում: Քաջ գիտակցելով իրողութիւնը, ծանր ապրումների մէջ Մխիթարը կորցնում է տեսողութիւնը, բայց ոչ հաւատը: 1692 թ. այդ հաւատով բազկատարած խոնարհուելով Սեւանայ վանքի Տիրամօր պատկերի առջեւ ու դիմելով Ամենաարքունի Կոյսի բարեխօսութեանը՝ լսում է Տիրամօր «Եղիցի»-ն: Յետագայ ողջ կեանքում Մխիթար Սեբաստացին իր հոգում միշտ անմար պահեց Սեւանայ վանքում հնչած «Եղիցի»-ն:

Այդ «Եղիցի»-ով ստեղծուեց ու եղաւ Մխիթարեանների հսկայածաւալ գիտա-գրական ժառանգութիւնը: Յիրաւի, ահռելի է այդ վաստակը գիտութեան, մասնաւորաբար՝ հայագիտութեան բնագաւառում, ինչպէս նաեւ՝ հայ տպագրութեան ու թարգմանական գրականութեան զարգացման գործում: Այն մեծ ու նշանակալի է ոչ միայն գիտական առումով, այլեւ ներծծուած է հարազատ հայ ժողովրդի եւ Մայր Հայրենիքի հանդէպ Մխիթարեան հայրերի ունեցած սիրով, նուիրումով ու մտահոգութեամբ: Նրանց մանրակրկիտ ուսումնասիրութիւններում Հայաստանը տեսանելի է յուշարձան առ յուշարձան, բնակավայր առ բնակավայր, հայ ժողովուրդը ներկայ է իր հարուստ պատմութեան մանրամասներով, բանահիւսութեամբ, ազգագրութեամբ, արքայական գրաբարով: Մենք գնահատանքով ցանկանում ենք արձանագրել, որ Մխիթարեանները մեծապէս արժեւորել են Հայ Ա-

ռաքելական մեր Սուրբ Եկեղեցու դերակատարութիւնը հայութեան կեանքում եւ ներդրում ունեն նաեւ Հայ Եկեղեցու ժառանգութեան մատուցման ու պահպանման մէջ:

Ի նշան առ Ս. Էջմիածինն ունեցած իրենց յարգանքի ու խոնարհութեան, սկսած Մխիթար Սեբաստացուց, Մխիթարեանները ողջ ԺԸ դարում իրենց տպագրած գրքերի տիտղոսութեւր թերին նշում էին ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսի առնելը, իսկ Եւրոպայում ընդունուած Փրկչական թրուականի կողքին՝ Հայաստանեայց Եկեղեցում ընդունուած հայոց թրուականը:

Խորհրդանշական մեծ իմաստ ունեն երբեմն պարզ զուգահեռութիւնները, ինչպէս Խրիմեան Հայրիկի ու Ղեւոնդ Ալիշանի պարագայում, որ ծնուել են միեւնոյն՝ 1820 թ. եւ համընթաց անցել ութ տասնամեակների վաստակեալ ճանապարհ: Ժողովուրդը Խրիմեանին անուանեց Հայոց Հայրիկ, իսկ Հայր Ալիշանին՝ Հայոց Նահապետ՝ հոգեւոր կամուրջ կապելով Ս. Էջմիածնից մինչեւ Ս. Ղազար եւ 1901 թ. տօնախմբելով իր խնկելի մեծերի ծննդեան 80-ամեայ տարեդարձները: Այդ օրերին վենետիկում յիշուում էր Ս. Էջմիածինը, իսկ Մայր Աթոռում՝ Ս. Ղազարը: Արդէն դողդոջուն Նահապետը, յիշելով մշտառոյգ Խրիմեանին, ասում է. «Ան Մասիսի հովին տակ կը քնանայ, Արաքսի ջուրը կը խմէ, Հայաստանի հացը կ'ուտէ, անոր հողի ոյժը կ'առնէ»: Հայոց Նահապետին նոր ոյժ ու զօրութիւն պարգեւելու համար Հայոց Հայրիկը պատուիրում է «Մասիսի հողէն, Երասխի ջուրէն ու Հայաստանի ծաղիկներէն քիչ մը վերցնեն եւ փոքրիկ արկղով մը դրկեն վենետիկ»: Աւաղ, սակայն, այն ուշ տեղ հասաւ եւ ցօղուեց Հայր Ալիշանի թարմ հողաթմբին:

Սիրելի Մխիթարեան Հայրեր, Մենք՝ Հայրապետ Հայոց, յորեւեանական այս օրերին Մեր ազգային գիտութեան այս բարձր ամբիոնից Հայոց Հայրիկի հարազատ ոգով գալիս ենք ջերմօրէն ողջունելու եւ Հայրապետական Մեր օրհնութիւնը բերելու Զեզ ու Մխիթարեան ուխտի ողջ միաբանութեանը: Այսօր, գոհութիւն եւ փառք Աստծոյ, Դուք ներկայացնում էք միացեալ արքայութիւն, ինչպիսին այն ստեղծուեց 300 տարիներ առաջ: Մեր հայցն ու մաղթանքն է, որ միութեան ոգին սաւառնի ինչպէս մեր ներքին եկեղեցական, այնպէս եւ համայն ազգային կեանքից ներս, որպէսզի կարողանանք 1700-ամեայ երազները մեր սուրբ նախնեաց կեանքի կոչել՝ ի բարօրութիւն ազգիս հա-

յոց: Աղօթքով առ Աստուած հայցում ենք, որ Տէրը առաջնորդի Մխիթարեան միաբանութեան հոգեւոր առաքելութիւնը, աջակից լինի նրա անդամներին հաւատով, ծառայասիրութեան ու ջանադրութեան զօրաւոր ոգով շարունակելու միաբանութեան 300-ամեայ աւանդները:

Մխիթարեան միաբանութեան 300-ամեակին նուիրուած գիտաժողովի բացման առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնութիւնն ենք բերում նաեւ նրա կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին եւ աղօթքով առ Աստուած մաղթում յաջողութիւններ՝ յանուն անցեալի մեր ժառանգութեան արժեւորման, յանուն հայոց գիտութեան այսօրուայ ու գալիքի:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ամենեւեան»։ ամէն: